

զերծ չէ քաղցկեղէն. գէշ պալարներ պատահած են նոյնիսկ արգանդի սաղմին մէջ: Տղու մը վրայ կանխադասուած քաղցկեղը անվրիպելիօրէն բուժելի է: Քաղցկեղի յաճախումը ոչ միայն տարիքի մէջ նկատելի է այլ նաեւ սեռի մէջ: Արիւնը՝ ենթակայ է ծննդագործարաններու քաղցկեղին, բայց հազիւ երբեք մարսողական գործարաններու: Մինչդեռ այլ մարդուն մէջ հակառակն է. ծննդեան գործարանի քաղցկեղը հազիւ երբեք կը պատահի, մինչդեռ մարսողական վտառի վրայ բունած քաղցկեղը գրեթէ միշտ այրերու վրայ կը յարձակի: Այլ մարդոց խոշակափողի պալարը յաճախադէպ է, ինչպէս՝ կանանց ծիծերու քաղցկեղը: Նախաքաղցկեղային վիճակի մը գաղափարը, վէրք, ճմլում, այտուց իբր սկզբունք ընդունուած է: Ընդհանրապէս նախաքաղցկեղային վիճակ կը նկատուին՝ այրուցքի սպիւններ, կամ հին սպիւններ, կամ երկարատեւ տապալիքի բորբոքած վէրքեր, և փրանկախ տային կամ պալարախտային կեղտում (ulcération):

Նախաքաղցկեղային երեւոյթներու այս վարկածը՝ պէտք է որ ամենամեծ խոհանարաններում նկատողութեան առնուի: Փարիզի մէջ 25000 նախաքաղցկեղային վիճակներու քննութիւնը՝ անոնցմէ քառորդին իսկ հաւանականութեան ապացոյցը չտուաւ: Չանագան օրինակներ մասնաւորապէս աչքի կը զարնեն: Չինացին չափազանց տաք, եռացած բրինձ կ'ուտէ, ինչ որ յաճախակի որկորի այրուցք կը պատճառէ. կ'ըսուի թէ այդ այրուցքը կը նպաստէ քաղցկեղին: Մինչդեռ Չինուհին՝ որ եփած պաղ բրինձ կ'ուտէ, հազուադէպ է որ քաղցկեղ ունենայ: Իսկ թէ որ ուրիշ երկիրներ նկատողութեան առնենք, կոկորդի քաղցկեղը այլ մարդոց կը պատահի սովորաբար: Չենք գիտեր ինչպէս մեկնել ծիծերու վերնամաշկի այտուցները (épithéliomas) «սեղմիրանին կուրծքին վրայ ճնշելով» ինչպէս որ կը կարծուէր. և սակայն կուրծքի քաղցկեղին քանակը չպակսեցաւ: Ինչ ինչ ծանօթ ախ-

տահարումներ իրապէս նախաքաղցկեղային են, վասն զի իրենց գէշ աճումը երազ է: Արդեօք իրական առնչութիւն մը գոյութիւն ունի՞ր և է վերաբորբոքումի և քաղցկեղի միջեւ: Վերաբորբոքումը անհրաժեշտօրէն քաղցկեղածին գործիչ մը չէ, բայց արիւնապալարի նկատմամբ՝ զոր կը գրգռէ, երբեմն սաստկացնող զեր մը կը կատարէ. յառաջացող կերպարանափոխումի տրամադիր մղումով ան կրնայ անծանօթ պալար մը յայտնել:

Քաղցկեղը ժառանգական է: Այս հարցին մէջ ու քննութիւնները վճռական արդիւնք մը չեն տար: Անժխտելի է թէ՛ կան պատահաներ որոնք ժառանգականութեան նշաններ ցոյց կու տան. բայց բացասական պարագաներ ալ չեն պակսիր: Մկներու վրայ եղած փորձերը ցոյց տուին թէ ձագերը (90-95 տո հարիւր) յատկապէս տրամադիր էին քաղցկեղի, իսկ ուրիշներ բոլորովին բացասական:

Քաղցկեղի բուժումի մասին կրնանք խօսիլ: Ուսումնասիրութիւններու վիճակագրութիւնները՝ կը պահանջեն առ նուազն հինգ տարուան միջոց մը՝ քաղցկեղի մը բուժումին հաւանականութիւնն ունենալու համար: Այս ժամանակամիջոցէն յետոյ շատ հազուադէպ են վերահաւանութիւն և վերակենդանացում. բայց տեղական ախտակրկնումը կրնայ վերայայտնուիլ: Քաղցկեղի ախտաբուժութիւնը պէտք է որ միակ նպատակ ունենայ պալարը անհետացնելու, մասնաւոր թէ վարակիչ վէրքերու պարսաւորումը (es-saimage) կանխարգելուի: Քաղցկեղի ծաւալումը ամենամեծ վտանգի նշան է: Դարմանումի զէնքն է վերահատութիւն, ուստի կենսաբուժութիւն, քիւրիաբուժութիւն (ֆ. ճառագայթներով), ելեկտրաամաճնում (diathermo-coagulation): Իւրաքանչիւր դարմանածեւի յարմարութիւնը և ազդուութիւնը քաղցկեղի բնութեան պահանջէն կախումն ունի: Բանաւոր ընտրութիւն մը կը պահանջէ՝ ճիշդ, վճռական ու կատարեալ ախտահանաչում. ու հարկ է ընտրել զիտ-

նալ, վասն զի դարմանումի սկզբնաւորութեան մէջ եղած սխալ մը անջնջելի է: Նոյնի քաղցկեղի մը (naevo-carcinome) դարմանումը ելեկտրաամաճնումով գրեթէ ապահով է. նոյնը նշտարակով՝ անխուսափելի մահ է: Սկզբնական վիճակի մէջ գէշ ըլլալը անորոշ կուրծքի փոքրիկ այտուց մը երկու անգամ գործողութեան ենթարկուելով ախտին տեղափոխութեան երեւոյթը կը ստեղծէ. մինչդեռ անթերի դարմանումով կրնար բուժուիլ: Ընտրել գիտնալն է՝ բժիշկին դերը քաղցկեղին առջեւ: Ընտրութիւնը հարկ է որ սարմանական զգուշութիւններէ: Այս միջոցին խորհրդածութիւնները կը ցուցնեն որ կատարելի քաղցկեղը պէտք է ենթարկուի փորձառու և խզմովա քաղցկեղագէտի մը քննութեան: Անհամար շատախօսներէ շատագուշտ կեղծ-գիտական դաբաժնումներ ոչ թէ միայն ապարդիւն ու փլաստար են, այլ նաեւ, իրական լաւագոյն դարմանումն ընելու թանկագին ժամանակը կորսնցնելու տան:

Ծանօթ. Քաղցկեղի վրայ Հայրենիք Օրոթերի 1946, Նոյեմբերի 5, 6 թիւերուն մէջ, Ամերիկացի Ռոքօ Բ. Սպէնսըրի՝ որ Տնօրէն է Քաղցկեղի Ազգային Հաստատութեան, կար շատ շահեկան ու գիտական յօդուած մը:

Խտալիոյ մէջ եւս, տարիներէ ի վեր, շատ մը լուրջ ու գիտուն մասնագէտներ, յատուկ աշխատանոցներու մէջ այս տեւրիչ ախտին դէմ պայքարելու համար աշխատութեան լծում են: Վերջերս Հոսթի մէջ՝ բժիշկ Անթոնիօ Կուստենիէրէին քաղցկեղին գէմ գտած նոր դեղը F. A. 2, բաւական ազդու հանած է և փորձերը լաւ արդիւնք տուած են:

Հ. Յ. Բ.

ՎԻՐԱԲՈՅԺԻ ՄԸ ՊԻՏԱԿԱՐԱՆԷՆ

ԽՈՐՀՐԴԱՆՈՐ ՄԻՏ ՄԸ

Օր մը պիտակարանս կը թերթատէի, երբ «Ալիս Սենթէր» անունին հանդիպեցայ: Բայց ուշադրութիւնս աւելի լուսանցքի ծանօթագրութեան դարձաւ. «Յիշել Օննիկ Ուոքէրը»:

Առաջին վայրկեանին այս ծանօթագրութիւնը ինծի բան մը չըստ: Ապա, յանկարծ, ամբողջ պատմութիւնը բոլորովին լուսաւոր կերպով վերադարձաւ յիշողութեանս: Խեղճ Օննիկ Ուոքէրը խել տղեկ մըն էր, որ ինծի պատահեցաւ իբր քննութեան առարկայ, վկայականիս քննութիւնը տալու առեւ:

Քննութեան անցնիլս՝ ես Օննիկ Ուոքէրի կը պարտիմ. և իմ կողմէս մեծ ապերախտութիւն մը պիտի ըլլար զինքը մոռնալը:

Շատ պզտիկ տղեկ մըն էր ան, տոգոյն, մաշած, ծայրաստիճան խել, ուստի իր անունը (Walker = քալոր) կապուած է այն անգութ կատակներէն մէկուն, զոր երբեմն ճակատագիրը ընելու թոյլ կու տայ ինքնիւրեն: Ան առաջուց ընելու թոյլ կու տայ տարածուած էր, տարապի մը անկողինին վրայ տարածուած էր, տարապի մը մէջ պլուած, ու քննիչս տասնհինգ վայրկեան տուա ինծի պզտիկին հիւանդութիւնը գտնելու ու խնամքի եղանակը որոշելու համար:

Տեսնագին քննեցի զինքը ոտքէն գլուխ. աչքերը, ակոսները, նշագեղձերը, կուրծքը, մորթը, սիրտը, ամէն տեղ: Բան մը չէի գտնիր սակայն: Ո՛հ, ահաւասիկ. ոտքի յօդուածները ուռած էին, նոյնպէս արմուկները: Տարօրինակ փափուկ ուռեցքներ էին, կարծես մէջը բամպակ լեցուած ըլլար:

«Ա՛հ, գտայ» մտածեցի. «պալարային (tubercolare) երեւոյթներ յօդուածներու շուրջ»:

Սակայն չէի կրնար ճիշտել թէ այդ յօդուածները գրեթէ բնական ճկունութիւնն ունէին: Օննիկ ինծի պատմեց թէ միշտ կ'ուռնին անոնք, ու ճիշտ ասոր համար շատ անգամներ հիւանդանոց գացած էր, ու թէ միշտ աւելի կը գէշնար վիճակը:

Բան մը չէի հասկնար:

— Գործողութիւն ընելու փորձ մը բժիշկներու մտքէն չէ՞ անցած բնաւ:

– Ո՛չ, պարոն. չէին համարձակիր:
«Չարմանալի բան» մտածեցի. «ինչո՞ւ չէին համարձակիր»:

– Ե՛րբ կ'ուզին, Օննիկ, – հարցուցի:

– Երբ գետին իյնամ ու զարնուիմ – պատասխանեց տղեկը:

Փայլակ մ'անցաւ մտքէս: Օննիկ Ուոքէրը դժբախտ օրինակն էր արիւնասիրոքեան (haemophilia), ամէնէն տարօրինակ ախտերէն մէկուն, որ մեզի ծանօթ է: Կեանքիս մէջ չէի հանդիպած նման դէպքի մը. բայց բնականաբար ասդին անդին բան մը կարողացած էի անոր մասին: Ուստի երբ քննիչս վերադարձաւ ասպահով կը զգայի ինքզինքս:

– Ուրեմն, ի՞նչ է:

– Արիւնասիրութիւն, Պր. Ուսուցչապետ:

– Այդպէ՛ս, ու ի՞նչ գիտէք անոր մասին:

Թափեցի անոր առջեւ գիտութեանս բոլոր պաշարը, որ շուտով սպառեցաւ:

– Լաւ, – ըսաւ նա – ու ի՞նչ խնամք ձեռք պիտի առնէիք:

Ափսո՛ս, այն ժամանակները դեռ այն ախտին համար ոչ մէկ խնամք կը ճանչցուէր: Ոչ մէկ դեղ, ոչ մէկ դարման, ոչինչ, ոչինչ...:

Փախտական ակնարկ մը նետեցի ուսուցչապետիս, որ համբաււոր մարդու մը իսկական տիպարն էր, շարք մը պաշտօններով, գիտական ու պատուոյ տիրոջներով ճոխացած, այնքան որ կրնային ամբողջ այցեւորման մը լեցնել: Այս պիտի դէպքի մը պարագային բնականաբար ինծմէ աւելի լաւ մէջէն պիտի կարենար ելլել:

Գիտութեանէն դիւանագիտութեան անցայ, ու պարզօրէն պատասխանեցի.

– Խնդիրը ձեզի կ'ենթարկէի, Պր. Ուսուցչապետ:

– Նայէ՛, Նայէ՛. ուրեմն ինծի ընծայ ընել կ'ուզես, հէ՛:

– Այո՛, Պր. Ուսուցչապետ:

Անոր աչքերուն մէջ փայլող ժպիտ մը քիչ մը շունչ առնել տուաւ ինծի:

– Իսկ ձեզի համեմատ ի՞նչ բան կրնար ըլլալ այն բանը – կը պնդէր դատաւորս, – զոր ես ի վիճակի եմ ընելու և դուք ոչ:

– Բացատրել ընտանիքին, Պր. Ուսուցչապետ, որ հանգիստէն ու հարկաւոր զգուշութիւններէ զատ ուրիշ ընելիք չկայ. ու անոնց մէջ այս համոզումը գոյացնել:

Իրականութիւնը այս էր, քիչ մը շողոքորթութեամբ համեմտած:

Ու անցայ:

Տասնհինգ տարիներ սահեցան, առանց որ ես արիւնասիրութեան դէպքի մը հանդիպէի, այսօր, մինչեւ որ տունս վազեց Ալիս Սենքլէր, կամ աւելի ճշգրիտ ըլլալու համար, տազնապած ատամնաբոյժ մը, որ Ալիս Սենքլէրի մէկ ակոսան հանած էր քսանըջորս ժամ առաջ ու դեռ չէր յաջողած դադրեցնել արիւնի հոսումը: Ով որ այս ախտն ունի չի կրնար ինքզինքը ամենափոքրիկ գործողութեան մ'իսկ ենթարկել: Մատի պզտիկ կտրուածք մը ժամերով կ'արիւնի ու ենթական կրնայ մեռնիլ արիւնի հոսումէն:

Արիւնասիրութիւնը ամէնէն տարօրինակ ախտերէն մէկն է: Միայն արուններու մէջ կը յայտնուի. մինչեւ այսօր կարելի չէ եղած գտնել արիւնասիրութեան դէպք մը իրական սեռին մէջ: Սա արդէն բաւական հետաքրքրական է: Բայց դեռ աւելին կայ: Ենթադրեմք որ մէկը ունենայ երկու զաւակներ, մանչ մը և աղջիկ մը. մանչը արիւնասէր ըլլայ և ենթադրեմք որ այս տղան ողջ մնայ ու ամուսնանայ ու մանչ զաւակներ ունենայ: Լաւ ուրեմն, անոնք բոլորն ալ բնականոն պիտի ըլլան, առանց բացառութեան:

Բայց ի՞նչ պիտի հանդիպի իր քրոջ: Չմոռնանք որ նէ արտաքսապէս բոլորովին առողջ պիտի երեւի: Կրնէր արիւնասիրութեան ենթակայ չեն: Ուրեմն եթէ նէ ամուսնանայ ու զաւակներ ունենայ պէտք է յուսանք որ անոնք ալ բնականոն ըլլան:

Գժեխտաբար այսպէս չէ: Իր արու զաւակներէն քանի մը հատը, կամ բոլորն ալ արիւնասէր պիտի ըլլան: Այս ախտը իրական ճիւղով կը ժառանգուի: Ահա թէ ինչո՞ւ հիւանդի մը թոռները, ծնած անոր արտաքսապէս առողջ երեցած մէկ աղջկէն, արիւնասէր կ'ելլեն. ուրովհետեւ հիւանդութիւնը արուններու մէջն է որ երեւան կու գայ՝ բայց կը փոխանցուի իրական սեռի միջոցաւ, որոնք փոխանցողներն են յաջորդ սերունդներուն:

Այս բանը այնքան աչքի կը զարնէ, որ բժիշկներ ջանացած են հաւաքել արիւնասէրներու ծննդաբանութիւնը մինչեւ 150 տարիներ առաջ հասնող: Բժիշկ Ուիլեմ Գալլը և իր ընկերը Պոլոս Զիլտս, այս ծննդաբանութիւններէն քանի մը հարիւրեակներ քննած են, ու այն

եզրակացութեան եկած՝ որ այս ախտը գրեթէ միմիայն տեւտոնեան ցեղերու յատուկ պատուհաս մըն է:

Քննութիւններու լոյսը աւելի ուժեղ կը զարնէ այս ախտին վրայ՝ նաեւ անոր համար որ Եւրոպայի թագաւորական ընտանիքներէն մէկը այս հիւանդութեան ցնցող օրինակը եղած էր: Ռուսիոյ վերջին Չարը, տարաբախտ Նիկոլայոս Բ, ամուսնացած էր Հէսս իշխանուհիին հետ, որ երեւութապէս առողջ կը թուէր ըլլալ. բայց դժբախտաբար այնպէս չէր, ու փոքրիկ Չարիւնը արիւնասէր ծնաւ: Այս հիւանդութեան յատուկութիւններէն մէկն է որ մերթ ընդ մերթ իր գոհերուն կը շնորհէ յարաբերաբար առողջ վիճակ մը: Ու այս եղաւ պատճառը որ այդ խաչագող Ռասփութինը այնքան ազդեցութիւն կրցաւ բանեցնել Չարին և Չարուհիին վրայ. իրապէս կ'երեւէր թէ նա փոքրիկ Չարիւնի կրնար առողջական շրջանը տալ՝ տեսակ մը մաքնեական ազդեցութեամբ:

Այս հիւանդութեան ուրիշ նշանաւոր օրինակ մը կը հանդիսանար Սպանիոյ թագաւորական ընտանիքն ալ. ահա թէ ինչո՞ւ նախկին թագաւորին զաւակին անունը այնքան ստէպ երեցած էր միջազգային մամուլին մէջ՝ յետ այս ախտին անողորմ յարձակումներուն:

Ի՞նչ է այս ախտին պատճառը, ոչ ոք գիտէ: Երբ բոլոր գիտցածը ասոր նկատմամբ այսքան Մեր բոլոր գիտցածը ասոր նկատմամբ այսքան է. բնականոն մարդոց արիւնը քանի մը վայրէկեանէն կը մածի, այնպէս մը որ եթէ արիւնասէր ինքնիւրէն կը դադրի: Մինչդեռ արիւնասէրներու արիւնին մէջ շաւն մը պակաս է. բնախօսները կ'ըսեն՝ թէ մակարդը պակաս է, որ կ'օգնէ արիւնի մածնելուն:

Մինչեւ մօտերս ոչ մէկ ազդեցիկ խնամքի կերպ ծանօթ էր, բացի առողջ անձի մը արիւնի փոխանցումէն: Ասով ժամանակ մը կը դադրէր արիւնասէրին մէջ արիւն հոսելու ձկտումը:

Բայց այս վերջին երեք տարիներու մէջ մեծ փոփոխութեան: Առաջինը ըրին Ռ. Կ. Մէք-Քայլեր առնուեցան: Առաջինը ըրին Ռ. Կ. Մէք-Քայլերն ու Պուրճիս Պառլըթ բժիշկները:

Ռիչուսկի իժ կոչուած ամէնէն վտանգաւոր օձ մը կայ, որուն թոյնը մահ կը պատճառէ խածուած անձին արիւնը արագօրէն մածեցնելով: Սա մտածել տուաւ մեր երկու բժիշկներուն: Որ այս թոյնը պատշաճ չափով գործածելով, որ այս թոյնը պատշաճ չափով գործածելով կարելի պիտի ըլլար հիւանդներուն արիւնը

մածեցնել: Փորձ մը ըրին՝ արիւնը փորձանակի մը մէջ լեցնելով ու տեսան որ արիւնասէրէն մը հանուած արիւնը եթէ երեսունհինգ վայրէկեան կը դնէր մածնելու համար, աւելցնելով վրան իր քանակին մէկ տասներորդին չափ այս թոյնէն 10 հազարերորդի վրայ լուծում մը, այդ արիւնը փոխանակ երեսունհինգ վայրէկեանէն մածնելու՝ տաւերեօրը մանկերոյդէն կը մածնէր:

Սա կրնայ ձեզի զաղափար մը տալ Ռիւսսէի իժի թոյնին բացառիկ մածուցիչ կարողութեան, բայց նաեւ անոր սպաննիչ կարողութեան ու արդիւնքին՝ որ պիտի հետեւի եթէ չափը սխալի:

Շարունակելով փորձերը տեսուեցաւ որ այս ահաւոր թոյնը արիւնի մածնում կը պատճառէր ամենափոքրիկ քանակութեամբ լուծումով ալ:

Արդ, թոյնը այսօր կը պատրաստուի մեծ խնամքով հակաէթերով զայն՝ կնքուած ու ամրափակ սրուակիկներու մէջ: Այսօր ատամնաբոյժ մը կրնայ աներկիւղ այնպիսի դժբախտի մը ակոսան հանել, կը բաւէ որ քաշէլէն անմիջապէս վերջ թոյնին մէջ թաթխուած բամբակի կտոր մը մոցնէ հանուած ակոսայի վէրքին մէջ: Նոյնպէս եթէ արիւնասէրը սեւէ տեղ մը վիրաւորուի՝ կը բաւէ նոյն նիւթով ծծուած վիրալաթ մը կապել անոր վէրքին վրայ ու արիւնի հոսումը շուտով պիտի դադրի. մինչ առաջ ժամերով կարելի չէր կեցնել արիւնի հոսումը, հակառակ վիրակապերու աւելի կամ նուազ սեղմ ըլլալուն, որոնք ուրիշ բան չէին ըներ եթէ ոչ արիւնի հոսումը աւելի զայրացնէ:

Մեծ յոռաշաղկիմութեան մը առջեւ ենք, ուրեմն բազմաթիւ դժբախտներու ապրելու կարելիութիւն է որ կը շնորհուէր: Բայց բնականաբար պատճառները այսպէսով չեն բուժուիր: Ու միւս կողմէն ալ այս թոյնը միայն արտաքին վէրքերու համար կարելի է գործածել: Արիւնի այտուցները (haematoma) ու յօդուածներու մէջ լեցուիլը կարելի չէ արգիլել ասով, որովհետեւ ոչ ոք պիտի համարձակէր այս մահադեղը արիւնի մէջ ներարկել՝ արիւնի մածականութիւնը աւելցնելու համար: Չափազանց վտանգաւոր պիտի ըլլայ այդ բանը, որովհետեւ արիւնի շրջանի դադարում մը կրնայ առաջ գալ անով:

Վերջերս ճիշտ այս մարդին մէջ ալ կ'երեւի թէ յաղթութիւն մը տարուած է: Երեք բժիշկներ՝ Թիմիւրլի, Նէիլ և Քլէյքը՝ որ Շեֆիլտ կ'աշխատէին

վտանգաւոր կերպով նուազած է, չուտով նոր ներարկում մը ընել տալու է:

Միւս կողմէն ճիշտ նոյն անպատեհութիւնն է որ տեղի կ'ունենայ շաքարախտին մէջ փայծաւ-ղայոյզով (Insulina) ու վտանգաւոր անարիւնութեան մէջ ատենօք գործածուած խնամքի եղանակին համար: Միայն թէ արիւնասիրութեան ներարկումները երակային ըլլալով՝ հիւանդը չի կրնար ինքնիշխան ընել:

Կը հասկցուի, նպատակին դեռ բոլորովին հասած չենք: Նոր նիւթեր փորձուելու հետ են, ու կրնանք վստահ ըլլալ՝ թէ կարելի պիտի ըլլայ լաւագոյն արդիւնքներ ձեռք բերել:

Ընդհանուր տեսութիւն մը տալով, այսօր այս

առեղծուածային ախտն ալ կը հետապնդուի ու կը հարուածուի իր բոյնին մէջ: Ու կարելի է յուսալ թէ չուտով ամբողջովին զինաթափ կարելի պիտի ըլլայ ընել զայն իր մահաբեր ու նենգաւոր գէնքերէն:

(Տեսնուած է որ Արիւնի մածնուի ժամանակը ամսէ ամիս կը տարբերի արիւնասէրներու մէջ. ու դժուար է Շեֆիլտի ներարկումի չափը գտնել իւրաքանչիւր պարագային համար: Ահա թէ ինչո՞ւ ուրիշ նոր փորձերու տուեալները՝ վերը նկարագրուածէն նուազ լաւ արդիւնքներ տուած են):

Թրգմ. Հ. Ա. Ֆ.

ԿԱՐԻ ՄԵՔԵՆԱՆ

ՄԱՅՐԻԿԻՍ

Լըքուած անկիւնը գաւթին կիսաւեր

— Կոտորածի հէք մնացորդ —

Վերագլուտանք զայն սիրտ մ'որպէս՝ զոր մաշեր
Են հոգն ու վիշտն ու կարօտ,

Օր մ'երբ տանջուած, արեւակէդ ու տփոյն
Երկու որբեր, այրի մ'հէք,

Աքսորի սեւ ճանապարհէն դարձանք տուն
Ճամբորդի պէս նաւարեկ:

Քարուքանդ էր ակութիւն մեր, աւերակ,
Որպէս դամբան մահաստուեր...

Չէր ճարճատեր ալ այնտեղ կայծ մը կըրակ,
Սեմն ալ մամուռն էր պատեր:

Ո՞ւր էր, աւանդ, մեր հին բունիկն՝ ընդունող
Ամէն գայլայլ ու արեւ,

Ո՞ւր էր ծաղկած այգեստանը լուսաշող
Վառ վարդերն ու թարմ տերեւ....:

Մառանն էր ճոխ, կարասներու մէջ մաքուր՝
Մեղրը, կարագն ու շաքար,

Հօրս քրտինքին ձօն՝ մանանայ երկնատուր՝
Կը հոսէին անըսպառ....:

Խըմորը պերկ, զոր տաշտին մէջ, լիաբար
Մայրիկս աշխոյժ կը շաղէր,

Կը նստանանք, կ'առատանանք, կը պոթկա՞ր
Իր սիրոյն պէս ինքնանուէր:

Աւանդ, ոչինչ կը մընար մեր լուսաւոր
Անցեալէն... Լսի լըբաւեր

Ժանգոտ 'Նօմանն' որ կաղանդէք մ'իրր աղուոր
Հայրիկս Պօլսէն էր բերեր:

Արծաթաշող ասեղն անոր նուրբ ու սուրբ
Կարեր էր բիւր լաթ, թիկնոց,

Հարսի բեհեզ, նորածինի խանձարուր,
Մեր խորանին նոր ծածկոց:

Եւ անիւն իր կարուհիին հետ ճարտար
Ներգեր էր երգ դաշնագեղ,

Իր թաւալումն եղեր մրմունջ ոսկեբառ
Սիրերդ, օրերդ, մեղմ գեղգեղ....:

Լուռ է հիմա... Մօրըս սիրտին պէս տանջուած
Ու սըղաւոր անոր պէս.

Արծաթաղօծ անիւն իր ժանգ է պատած,
Շարժն իր դարձած՝ դժգ մը հեղ....:

* * *

Ա՛խ, կը յիշես, ըսէ, կայտառ մանուկն այն,
Եղբայրս անմեղ, սեւաշուի,

Որ կը փորձէր բիւր հընարքներ կանթիդ վրան,
Էր ընկերն իր խաղի:

Իր ինքնաշարժն էր, քիչ մը կաղընթաց,
Շըռընդալից, թաւալուն,

Կամ երազող հոգին կու տար քեզ յանկարծ
Օգնաւի մ'ահեղ շուն....:

Ձըմեռն ալ երբ փռէր ճերմակ իր սաւան,
Ծածկէր տանիքն ու փողոց

Ու երբ մոռնար մեզ մեր կաղանդ Տէր Պապան,
Մըխին փըլած, դուռը գոց,

Դուն այն տանն կ'ըլլայիր 'Նաւն հեքեաթի
Կը տանէիր մեզ հեռուն,

Գեղակառոյց երազներուն հրաշալի
Կը բանայիր լոյսէ դուռն....:

* * *

Հիմա ոչինչ ունիմ այլեւս յուսալիք
Ո՛չ իսկ պատրանք մ'օրօրուն...

Տանջուող հոգիս ալ կարծես փակ է գալիք
Վարդ ու զըւարթ օրերուն:

Չես իսկ կարող կարել ըզգեստ մը սուգի,
Կանթըդ ալ ձեռք մ'է կոտորած...

Լալկան մրմունջդ հոգիս մէջ կը սուգի
Գիրերդ հեքեաթ անիմաց:

Բայց կը տանիմ քեզ հետս քաղքէ միշտ քաղաք
Յոգնատանջ սիրտ մ'իրր հըլու,

Կորած Եղբորս, քանդուած Տունիս յիշատակ՝
Քեզ արցունքովս իւղեւու....:

Փարիզ, Օգոստոս 1943.

ՄԱՌԻ ԱԹՄԱՃԵԱՆ